

ուել

ՍՈԽԱԿ

Սեղամաղձուտ տիսուր գէմքով  
Երջում էի կանաչ հովտում.  
Նիշար ձեռքս դրած ճակտիս  
Ես վշտացած միտք էի անում:

Զգուեցի փուչ աշխարհի  
Արտամաշուկ կարգ կանոնից.  
Եւ սիրտս խիստ դառնացել էր  
Ստոր մարդոց բիրտ խօսքերից:

Ամեն կողմից ատելութիւն  
Դէպի բարին ու գեղեցիկ,  
Ամեն կողմից մամոնային՝  
Խնկարկում են մոլի մարդիկ...

Դորա համար բազմութիւնից  
Փախել էի սարսափահար,  
Որ բնութեան ազատ ծոցում  
Ես գտնէի ինձ միիթար...

Յանկարծ մի ձայն մեզմ սրտառուչ  
Ախորժ հնշեց իմ ականջին.  
Եթու նայեմ, ո՞չ տեսնեմ սոխակ  
Կանգնած ծառի փոքրիկ ճիւղին,

Նա երգում էր իր երգն անոյշ  
Այնպէս քաղցր այնպէս փափիկիկ,  
Որ դայլայլիկ նորա աղդու  
Շարժեց սրտիս քնքոյշ թելիկ...

Ես մոռացայ համայն աշխարհ  
Իր անզգայ շնչողներով,  
Տեղի տուին ցնորըներս  
Խորհրդաւոր իրանց մոքով...

Իսկ աչքերս լցուեցին  
Գոհարի պէս արտասուբով,  
Վշտահարած սիրտս ճիւած՝  
Անմահական խնդութիւնով...

Եւ հասկացայ վեհ սոխակի  
Ախորժելի անոյշ լեզուն,  
Եւ իմացայ արտասուելով  
Այն թռչունը ինչ էր ասում:

Նա լալիս էր այս աշխարհի  
Լկտի մարդոց գործքի վերայ,  
Որ կենարար արդարութիւն՝  
Նորանցից է միշտ բացագայ...

Նա զրկածին յուսահատին  
Կեանք և յոյս էր ներշնչում.  
Նա չարերին, անգութիւներին  
Վեհ Արարչից մահ էր ինզրում...

Նա ստրուկներին, Ճնշածներին  
Ցորդորում էր միշտ՝ աշխատանք,  
Որովհետեւ աշխատութիւն  
Է ձորտութեան միակ փրկանք...

Երգիր, սուլի՛ր, չքնաղ սոխակ,  
Քո աննման երգը սիրուն.  
Ճնշիր ձայնդ բարձր—բարձր,  
Լսեցնել տո՛ւր միտքդ ամենուն...

Աղղեցիր, ո՞չ, կոտրած սրտիս  
Քո ոգեշունչ մեղմ երգերով.  
Ահա, կրկին դէպի մարդիկ  
Դիմում եմ ես վեհ քայլերով...

ՄՐՒԿ.

ՏՀՀՀ